ՀԱՆԳՈՒՍՏ
Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻ

Ապրիլի 4-ի գիշերը ի Տեր հանգչավ Տ. Հովհաննես ավագ քահանա Տեր-Մինասյանը։

Հանգուցյալը ծնվել է 1880 թվականին Աբարանի շրջանի Գյուլուջաղ գյուղում։ Փոքր հասակից նա տեղափոխվել է Բաթումի, ուր և ստացել է հոգևոր կրթություն։ Երկար ժամանակ նա ծառայել է տեղի հայոց եկեղեցում իբրև դպիր։ 1914 թվականին հոգևոր վերին իշխանությունը, գնահատելով նրա հոգևոր ծառայությունը և ընդառաջելով իր ծննդավայրի բնակչության դիմումներին, քահանայական ձեռնադրություն է տվել իր ծննդավայրի վրա։

1914 թվականից մինչև իր վախճանման տարին նա հաջորդաբար ծառայել է իբրև վանահայր, եկեղեցական գործերի կազմակերպիչ և ավագերեց Երևանի Ս. Հովհաննես եկեղեցում և Աստրախանի ու Կիրովաբադի եկեղեցիներում։ 1952 թվականի վերջերը Կիրովաբադում ծանրապես հիվանդանալով, տեղափոխվում է Երևանի իր սեփական բնակարանը, որտեղ վրա է հասնում մահը։

Բոլորանվեր և անձնադիր այս եկեղեցականը առաջին օրից ցույց է տվել գործելու ջերմ եռանդ և նվիրվածություն։ Վերադաս հոգևոր իշխանության կարգադրությամբ ուր որ էլ ծառայել է, շնորհիվ իր համեստ, բարի և ամբարիր կյանքի, կարճ ժամանակի ընթացքում նրան հաջողվել է շահել իր հոտի համակրանքն ու վրատահությունը։ Ահա թե ինչո՞ւ իր ձեռնադրությունից հետո մինչև 1920 թվականը հաջորդաբար նա գնահատվել է ավագության, լանջախաչ և ծաղկյա փիլոն կրելու իրավունքներով։

Ապրիլի 5-ին, Երևանի Ս. Հովհաննես եկեղեցու քահանա հայրերը՝ Տ. Վարդան ավագ քահանա Գրիգորյանի գլխավորությամբ, հանգուցյալի բնակարանում կատարեցին լվացման և տան կարգը և ապա մարմինը տեղափոխեցին Ս. Հովհաննես եկեղեցին։ Ապրիլի 9-ի առավոտյան, Վեհափառի հատուկ կարգադրությամբ, պատարագեց և օծումը կատարեց գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը, մասնակցությամբ հոգեշնորհ Տ. Նահապետ վարդապետի և Երևանի եկեղեցիների քահանայական դասի։ Պատարագիչ սրբազանը գեղեցիկ և հակիրճ քարոզով վեր հանեց հանգուցյալի նվիրումն ու արժանիքները։

Հուղարկավորությունը, սրբազանի նախագահությամբ, կատարվեց Ս. Հովհաննես եկեղեցուց դեպի Բերդիայի մոտակա մեկ ամանը, որտեղ թաղվել են իր սիրելի հարազատները։ Թաղումը կատարվեց արժանավայել, իր հարազատների և համակիրների ներկայությամբ։

Տերը լուսավորի հանգուցյալի հոգին։